

ՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄԱՍԿ

Տարեկան գինը 10 ռուբլ է և տարվանը 6 ռուբլ:

Թիֆլիսում գրվում են միմյանի խմբագրատան մէջ:

Օտարաբաղադրեցի գրվում են ուղղակի
Тифлиса. Редакция „Маск“

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(հացի կիրակի և տոն օրերից):

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են
խաբանչիւր բառին 2 կոպէկ:

ԲՈՂԱՆՈՒԹԻՒՆ

Երկրագործական դպրոց Հայաստանում:—Ներքին տեսութիւն: Մի պրոէկտ: Նամակ խմբագրին: Ներքին լուրեր: «Մշակի» հեռագրերը:—Յայտարարութիւններ:

ԵՐԿՐԱԳՈՐԾԱԿԱՆ ԴԱՊՐՈՑ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Մենք ասացինք մեր սնցեալ յօդուածում որ արուեստական կերպով և անժամանակ յարուցանել տնտեսական կամ որ և է այլ պահանջ ժողովրդի մէջ անհնարին է:

Թիւրքաց Հայաստանի այժմեան դրութեանը նայելով նրա կենտրոնում երկրագործական դպրոց հիմնելը բոլորովին ապարդիւն մի գործ է:

Հայ մշակը, Հայ երկրագործը արդիւնաբերում է աւելի քան թէ կարող է սպառել նոյն ինքն երկիրը և ուրիշ կողմից չէ կարող վաճառահանել իր բերքի աւելորդը մի ուրիշ երկիր, որովհետեւ ճանապարհներ չունենալով և կան: Ինչու ուրեմն նա պէտք է կատարելագործի իր երկրագործական ձեւերը, երբ որ դրանց մէջ պէտք չունի...

Մենք հասկանում ենք երկրագործական դպրոցի պէտքը մի այնպիսի երկրում, որտեղ տնտեսական և հասարակական կենտրոն պահանջը այնքան է զարգացել որ երկրի արդիւնաբերածը նոյն իսկ երկրի պէտքերին էլ չէ բաւականացնում, կամ որ պէտք է Հայ թայթի բնական ամենաանհրաժեշտ բերքը հարեան երկիրներին, մինք հասկանում ենք կատարելագործված երկրագործական միջոցների մոցնելը այնպիսի մի երկրի մէջ, որի մշակ դասի ոյժերի մի մաս գործ է գրվում այլ և այլ գործարանների աշխատանքի վրա, որտեղ մշակ մարդու ձեռքը հազադիւտ և թանկ է, որտեղ ժամանակը մեծ գին ունի: Այդ տեսակ երկրում մենք հասկանում ենք երկրագործական մեքենաների մոցնելը... Մենք հասկանում ենք երկրագործութեան ձգտումը գէպի կատարելագործութիւնը, այնպիսի երկրում, որ ազատ է վարչական կամայականութենից, որ-

տեղ վարչական այլանդակ պատեմը չէ ճնշում երկրի տնտեսական ազատ զարգացման վրա, որտեղ կան օրինաւոր ճանապարհներ և երկաթուղիներ:

Բայց այդ բոլորի նշոյն էլ չը կայ թիւրքաց Հայաստանում, որտեղ ժամանակը դեռ գին չունի, որտեղ բանտրի ձեռքը գրեթէ ոչինչ չարժէ, որտեղ պահանջ չը կայ արդիւնաբերել աւելի, քան թէ ինքն բնութիւնն է տալիս, և որտեղ բնութիւնը, չը նայելով ամենանահապետական մշակութեան, այնքան աւատ է, որ աւելի է ընծայում մարդիկներին, քան թէ նրանք կարող են սպառել...

Փորձեցէք վաճառահանել Հայաստանի պէս ճանապարհներ չունեցող երկրից դուրս ցորենի մի հակ,—և այդ հակի ճանապարհի ծախսը ձեզ աւելի թանկ կը նրստի, քան նոյն իսկ հակի մէջ պարունակված ցորենի գինը: Դեռ կարելի է գուցէ յայտնի շահով վաճառահանել Հայաստանից այնպիսի բնական բերքեր, ինչպէս օրինակ մետաքս, որ համեմատաբար փոքր ծաւալման մէջ պարունակում է աւելի մեծ արժողութիւն...

Թող թիւրքիւն, կամ նրա բաղադրական վիճակի վրա ինամբ տանող լուսաւորված Մշակն նախ և առաջ շինեն ճանապարհներ և երկաթուղիներ Հայաստանում, ազատեն այդ երկիրը նրա քրտինքը և արիւնը ծծող հարստահարիչ թիւրք պաշտօնեաների ձեռքից, վերջապէս տան թիւրքաց Հայաստանին ինքնավարութիւն,—և մենք առաջնները կը լինենք, որ կը բարոյգնեն երկրագործական դպրոցի Հայաստանի մէջ հիմնելու զաղափարի անհրաժեշտութիւնը:

Իսկ թիւրքաց Հայաստանի այժմեան տնտեսական, հասարակական և բաղադրական դրութեանը նայելով նրա մէջ հիմնելու երկրագործական դպրոցի համար գումարներ ժողովելը,—կամ խենդութիւն է, կամ խաբէութիւն է:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԻ ՊՐՈԷԿՏ

«ԲԱՅԿԱՅ» լրագրում կարդում ենք Թիֆլիսում հրատարակական դասախոսութիւններ կարգաւ համար կազմված յանձնաժողովի հետեւեալ ծրագիրը:

- 1) Ծանփառագողը կաշնատի Թիֆլիսում հրատարակական դասախոսութիւններ հիմնել այն նպատակով, որպէս զի ժողովրդականացնել գիտութեան զանազան ճիւղերին մանաւանդ Կովկասի վերաբերեալ զանազան տեղեկութիւններ:
- 2) Ծանփառագողը կը բաղկանայ հիմնադիր անդամներից, որոնք փոյթ կունենան գործի կազմակերպութեանը, մինչև կանոնների հաստատութիւնը և նոր մտնող անդամներից, որի գիտաւորութեան մասին կը յայտնէ յանձնաժողովի անդամներից մէկը, և յետոյ նրան կընտրեն գաղտնի բուհարկութեան ձայների առաւելութեամբ: Բայց բուհարկութեան ժամանակ ներկայ պէտք է գտնվեն յանձնաժողովի բոլոր անդամների գնէ ոչ 1/3-ից պակաս: Ծանփառագողը անդամ կարող են լինել նոյնպէս և կանայք:
- 3) Ծանփառագողի գործունէութիւնը կաշնաւորվում է ա) նրանում, որ նա գիտութեան այլ և այլ ճիւղերին վերաբերեալ դասախոսներ (lecteur) հրաւիրէ: Բ) որ նա դասախոսութեան համար նիւթ ընտրէ: Գ) որ նա դասախոսութիւններին կարգով և կանոնաւոր ուղղութիւն տայ: Դ) որ նա օգնէ դասախոսին անհրաժեշտ եղած պիտոյքները գտնելու և դասախոսութեան պահանջին համեմատ կարգադրութիւններ անելու: Ե) որ նա որոշի ժամանակը և այն տեղերը, ուր պէտք է կարգադրեն հրատարակական դասախոսութիւնները: Զ) որ նա որոշի լսողների համար տեղերի սովորական գները և է) որ նա հրատարակէ և կառավարէ գործի տնտեսական մասը:
- 4) Այս պարտականութիւնները շուտով իրագործելու համար յանձնաժողովը իւրաքանչիւր տարի իր միջից 10 մարդուց բաղկացած վարչական մի մասնաժողով է ընտրում, որոնք իրանց գիտական և գրականական գործունէութեամբ զանազան մասնագիտութիւններին են պատկանում, բայցի այս, մասնաժողովը մէջ գնէ 4 մարդ պէտք է լինեն, որոնք ծանօթ լինեն տեղական դիւլաւոր լեզուների հետ:
- 5) Այս մասնաժողովը, պահանջին համեմատ, պարբերաբար կը ներկայացնէ յանձնաժողովին իր այն որոշումները, որոնք կը ձգտեն գործին ամենալաւ կազմակերպութիւն տալ, և իւրաքանչիւր դասախոսութեան ժամանակամիջոցը (saison) լրանալուց յետոյ, նա իր գործունէութեան վերաբերութեամբ գիտական և տնտեսական կողմից հաշիւ կը ներկայացնէ:
- 6) Առանձին դասախոսների վերաբերութեամբ մասնաժողովը չէ խառնվել նրանց դասախոսութիւնների բուն գիտական կողմին—որի պատասխանատւութիւնն լիովին թողվում է դասախոսների սեփական ընդունակութեանը և հմտութեանը, մասնաժողովը

կը ըննի միայն դասախոսութեան համար ընտրված աւարկայի հարկաւորութիւնը, թէ ժողովրդականութեան կէտից նայելով որ աստիճան է մշակված դասախոսութեան համար ընտրված այդ նիւթը, ժամանակը, դասախոսութեան տեղը, և այլն: Այս նպատակով իւրաքանչիւր դասախոս պարտական է վարորդը ներկայացնել մասնաժողովին իր դասախոսութեան մանրամասն կօնպէկալը, կամ եթէ այդ հարկաւոր է համարում մասնաժողովը, նոյն իսկ ձեռագիրը:

7) Նոյն իսկ դասախոսութիւնները կարող են կրկնակի նշանակութիւն ունենալ, կամ շատ թէ քիչ գիտական և կամ բոլորովին ժողովրդական և ընդհանուրին մատչելի: Իսկ ժողովրդական դասախոսութիւնների կարգադրութիւնները, այս խօսքի բուն նշանակութեամբ, մասնաժողովի գործունէութեան շրջանից դուրս են:

8) Դասախոսութիւնները կը լինեն մեծ մասամբ առասաց, վրաց, հայոց, թաթարների, ինչպէս և ուրիշ եւրոպական կամ տեղական լեզուներով, ի՞նչէ միայն այդ հարկաւոր կը համարվի:

9) Դասախոսութիւնները կարգադրվում են առանձին գիտական հարցերի վերաբերութեամբ: Իսկ և նոյն հարցի վերաբերութեամբ կարելի է կարգադր մի քանի դասախոսութիւններ, այն դասախոսութիւնները, որոնք ամենից շատ են հետաքրքրում հասարակութեանը, կարող են կարգադրվել մէկ կամ մի քանի բնթերցողներից և մինչև անդամ մի քանի լեզուներով: Ի՞նչէ միայն դրա մասին կը համար ձայնեն իրանց մէջ դասախոսները:

10) Հրատարակական դասախոսութիւնների ժամանակը (saison) կթէ արդէլ չի լինի սկսվում է նոյեմբերի 1-ից և շարունակվում է մինչև մայիսի 1-ը:

11) Իբրև դասախոսութեան տեղ կարող են ծառայել ուսումնական հիմնարկութիւններ, կուրքների և ուրիշ հասարակական հիմնարկութիւնների զահլեճները, նայելով նրանց յարմարութեանը հասարակութեան և դասախոսների համար, և այն անձինքների համաձայնութեամբ, որոնք կառավարում են այդ հիմնարկութիւնները:

12) Ծանփառագողի կրթողական նպատակների ամենալաւ իրագործման համար, նրա մօտ կազմվում է և գրամատուլ, որ անհրաժեշտ է զանազան գիտական և տեսական միջոցներ ձեռք բերել, որոնք կը նպաստեն դասախոսներին կարելի եղածին չափ լաւ պայմաններին մէջ գնել իրանց դասախոսութիւնները, և որ կը ծառայէ այսպիսի այլ և այլ պիտոյքներին:

13) Այս գրամատուլը կազմվում է իւրաքանչիւր դասախոսութեան առանձին առանձին եկամուտների մի որոշեալ %-ից, որը առաջին անգամ նշանակվում է զուտ արդիւնքի 25%-ը, իսկ մնացած մասը, բոլոր ծախսերը ծածկելուց յետոյ յանձնվում է դասախոսին:

14) Եթէ կարելի լինի ժամանակով յանձնաժողովը կարող է այսպիսի դասախոսութիւններ հիմնել և Կովկասի միւս քաղաքներում, մանաւանդ այն հարցերի վերաբերութեամբ, որոնք մի առանձին կերպով հետաքրքրում են հասարակութեանը:

15) Իւրաքանչիւր առանձին դասախոսու-

